


ՋԵՅՄՍ ՄԱՔՍԿԵԼ



1831-1879

Անգլիացի ֆիզիկոս Ջեյմս Բլարկ Մաքսվելն ապրել է ընդամենը 48 տարի: Թեպետ իր կարճ կյանքին՝ անչափ մեծ է նրա գիտական ավանդող ֆիզիկայի բնագավառում: Ֆիզիկայի զարգացման գործում նրա ամենամեծ ներդրումը համարում են էլեկտրամագնիսական դաշտի ամբողջ տեսությունը ներառող չորս հավասարումները, որոնք ներկայումս կոչվում են նրա անունով:

16 տարեկանում Մաքսվելն ընդունվում է Էդինբուրգի համալսարան և սկսում է ուսումնասիրել ֆիզիկա ու մաթեմատիկա: Երեք տարի անց նա տեղափոխվում է Քեմբրիջի համալսարան, որն ավարտելուց հետո մնում է այնտեղ մանկավարժական աշխատանքի: 29 տարեկանում նա ընտրվում է Լոնդոնի թագավորական ընկերության անդամ և սկսում է ղեկավարել Լոնդոնի համալսարանի թագավորական քոլեջի ֆիզիկայի ամբիոնը:

Մաքսվելի առաջին աշխատանքները նվիրված են գունավոր տեսողության ֆիզիկային: Հենվելով այդ ժամանակվա հայտնի արդյունքների վրա (էլեկտրական դաշտ, ուժագծեր, Կուլոնի օրենք, Ֆարադեյի էլեկտրամագնիսական մակածման օրենք, Ամպերի օրենք և այլն)՝ Մաքսվելը ընդհանրացնում և մաթեմատիկական հստակ ձևակերպումներ է տալիս դրանց: Նա առանց որևէ փորձարարական հիմքի, առաջ է քաշում տեսական մի վարկած, համաձայն որի՝ փոփոխական էլեկտրական դաշտը, ինչպես սովորական էլեկտրական հոսանքը, ծնում է մագնիսական դաշտ: Նրա ձևակերպած հավասարումներից հետևում է, որ էլեկտրամագնիսական ալիքները տարածվում են լույսի արագությամբ: Դա հնարավորություն է տալիս նրան կանխատեսելու, որ լույսը էլեկտրամագնիսական ալիք է: Անչափ մեծ է Մաքսվելի դերը նաև մոլեկուլային-կինետիկ տեսության կայացման գործում: Նա հայտնագործել է ըստ արագությունների մոլեկուլների բաշխման օրենքը, որը ներկայումս կոչվում է Մաքսվելի բաշխման օրենք, բացի այդ, ցույց է տվել ջերմադինամիկայի երկրորդ օրենքի վիճակագրական բնույթը: